

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ. ՏԵՔՍՍ vs ԻՐԱՎՈՒՆՔ

ԿԱՐԵՆ ԶԱՐԻԿՅԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«(1) Կարդա օրենքը, (2) կարդա օրենքը, (3) կարդա օրենքը», - պատասխանում է փորձառու դատավորը հարցին՝ ի՞նչ հիմնական կանոններով պետք է մեկնաբանել օրենքը¹: Օրենքի կիրառման վերաբերյալ հիմնական պատկերացումն է՝ դատավորը պետք է «կարդա օրենքը և անի այն, ինչ ասված է դրանում»²: Եթե նույնիսկ իրավական տեքստի ընկալման հարցում կան տարաձայնություններ, պետք է ընդամենը ուշադիր կարդալ հեղինակի միտքը³ կամ ըմբռնել նրա նպատակը⁴ կամ օգտվել իրավաբանական լավագույն բառարաններից⁵:

Հարվադի համալսարանի պրոֆեսորներ Քաս Սանստեյնը և Ռիչարդ Ֆելլոնը էլ ավելի պարզ են ձևակերպում այս խնդիրը. իրավունքի մեկնաբանությունն «ընդամենը այն է, ինչ կա»⁶: Իսկ եթե իրավական նորմի տեքստը արտահայտում է մի քանի իմաստ, դատավորները ազատ են ընտրելու այն տարբերակը, որը հավասարակշռում է իրավական դաշտը⁷, կամ որն առավելապես համապատասխանում է սահմանադրական պահանջներին⁸:

Բոլոր այս մոտեցումները հաշվի չեն առնում մի բան՝ իրավունքը: Օրենքի մեկնաբանությունը լեզվաբանական խաղ չէ. դա կառավար-

¹ Տե՛ս **Henry J. Friendly, Mr. Justice Frankfurter** and the Reading of Statutes, in *Benchmarks* 196, 202 (1967):

² **Daniel A. Farber & Philip P. Frickey**, *Law And Public Choice: A Critical Introduction* 88 (1991), տե՛ս նաև **Mark Greenberg**, *The Standard Picture And Its Discontents*, In 1 *Oxford Studies In Philosophy Of Law* 39, 48 (Leslie Green & Brian Leiter Eds., 2011), **Felix Frankfurter**, *Some Reflections On The Reading Of Statutes*, 47 *Colum. L. Rev.* 527, 528–535 (1947):

³ Տե՛ս **Larry Alexander**, *Telepathic Law*, 27 *Const. Comment.* 139 (2010):

⁴ Տե՛ս **Stephen Breyer, Madison Lecture**, *Our Democratic Constitution*, 77 *N.Y.U. L. Rev.* 245, 266 (2002):

⁵ Տե՛ս, օրինակ, **William Winslow Crosskey**, *Politics And The Constitution In The History Of The United States* 3–4 (1953), **Thomas W. Merrill**, *Essay, Textualism And The Future Of The Chevron Doctrine*, 72 *Wash. U. L.Q.* 351, 372 (1994), **Cf. John F. Manning**, *The New Purposivism*, 2011 *Sup. Ct. Rev.* 113, 177–78:

⁶ **Cass R. Sunstein**, *There Is Nothing That Interpretation Just Is*, 30 *Const. Comment.* 193, 193 (2015), նաև **Richard H. Fallon, Jr.**, *The Meaning Of Legal “Meaning” And Its Implications For Theories Of Legal Interpretation*, 82 *U. Chi. L. Rev.* 1235, 1238–39 (2015):

⁷ Տե՛ս **Fallon**, *supra* note 6, 1303–05:

⁸ Տե՛ս **Sunstein**, *supra* note 6, 212:

ման այն գործիքն է, որի միջոցով իրավունքը դառնում է իրականություն: Օրենքի մեկնաբանությունը բացահայտում է իրավական համակարգում կոնկրետ իրավիճակին նախապես տրված լուծումը: Օրենքը շարադրվում է բառերի միջոցով, բայց դրանք սին խոսքեր չեն: Օրենքը մեկնաբանողը չի պարզում միայն գրված բառերի նշանակությունը: Նրա խնդիրն է հասկանալ՝ ի՞նչ լուծում է տվել օրենսդիրը կոնկրետ այս հարցին, ինչպե՞ս է այդ լուծումը տեղավորվում ողջ իրավական համակարգում և ամբողջության մեջ ի վերջո ի՞նչ է սահմանել օրենսդիրը⁹: Նման հարցերի պատասխանները, տեքստի լեզվական ընկալումից զատ, ենթադրում են ամբողջ իրավական համակարգի իմացություն: Բառերի լեզվական ընկալումն իհարկե գործընթացի մեկնարկն է, սակայն իրավունքն է լցնում դրա բովանդակությունը¹⁰:

Այս աշխատանքի նպատակն է քննարկել մեկնաբանման այն կանոնները, որոնք բխում են ոչ թե սուկ բառերի լեզվական իմաստից, այլ իրավունքից կամ «իրավունքի էությունից» կամ «իրավունքի սկզբունքներից» կամ «իրավունքի ստանդարտներից»: Եզրույթները տարբեր կարող են լինել, սակայն կարևորն այն է, որ օրենքի մեկնաբանման նման կանոնները տեսականորեն հնարավոր են, նորմատիվորեն՝ տեսանելի և իրավական համակարգի մաս են կազմում:

Ամերիկյան մի շարք հեղինակավոր իրավագետներ իրենց աշխատություններում քննարկել են այս խնդիրը¹¹: Նրանցից շատերը փորձել են մեկնաբանման իրավական կանոնները բխեցնել օրենքների տարբեր դրույթներից, իրավական հայեցակարգից կամ սահմանադրական նորմերից: Իսկ ոմանք էլ ուղղակի ընդունել են, որ մեկնաբանման կանոնները չգրված իրավունքի մաս են կազմում, նույնիսկ եթե կարգավորում են գրված իրավունքի մեկնաբանման հարցը¹²:

Ընդ որում, պրոֆեսորներ Ուիլիամ Բոուդը և Ստիփեն Ի. Սաքսը տարանջատում են «մեկնաբանումը» «կառուցումից» (construction)՝ առաջինը համարելով իրավական նորմի սուկ լեզվական, երկրորդը՝ իրավական իմաստի վերհանում¹³: Իհարկե, «կառուցում» եզրը այնքան էլ չի համապատասխանում հայրենական իրավամտաճողությանը, սակայն իմաստը լիարժեք ընդունելի է: Իսկապես, իրավական նորմի իրավաբանական բովանդակության բացահայտումը զուտ տեխնիկական գործընթաց չէ, այլ ենթադրում է բառերի և արտահայտություններ

⁹ Տե՛ս **John Finnis**, Introduction To Philosophy Of Law: Collected Essays 1, 18 (2011):

¹⁰ Տե՛ս **William Baude & Stephen E. Sachs**, The Law Of Interpretation, Harvard Law Review, Volume 130, February 2017, Number 4, 1083:

¹¹ Տե՛ս, օրինակ, **Helen Silving**, A Plea for a Law of Interpretation, 98 U. Pa. L. Rev. 499, 501 (1950), **Abbe R. Gluck**, Intersystemic Statutory Interpretation: Methodology as “Law” and the Erie Doctrine, 120 Yale L.J. 1898, 1907–24 (2011):

¹² Տե՛ս **Abbe R. Gluck**, The Federal Common Law of Statutory Interpretation: Erie for the Age of Statutes, 54 Wm. & Mary L. Rev. 753 (2013), **William Blackstone**, Commentaries *68, **William Baude & Stephen E. Sachs**, supra note 10:

¹³ Տե՛ս **William Baude & Stephen E. Sachs**, supra note 11, 1128–1132:

րի իրավական «կառուցում», որը թույլ կտա բացահայտել օրենսդրի իրական կամքը:

Հիմք ընդունելով իրավական «կառուցման» հայեցակարգը և պաշտպանելով իրավական նորմերի մեկնաբանման գործընթացի իրավական լինելու թեզը՝ այս աշխատանքում փորձ է արվել համակարգելու իրավական նորմերի մեկնաբանման ինչպես գրված, այնպես էլ չգրված իրավական կանոնները:

II. ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ «ՍՏԱՆՊԱՐՏ ՊԱՏԿԵՐԸ»

(1) Պարզ իրավական նորմերը

Իրավական նորմերի մի մասը այնպես է ձևակերպված, որ բառերի շարադրանքից ակնհայտ է օրենսդրի պատվիրանը: Դրանք պարունակում են այնպիսի արտահայտություններ, որոնք հասարակության կողմից ընկալվում են միանշանակորեն և չեն առաջացնում երկիմաստություններ (օրինակ՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական տրվում է 18 տարին լրացած անձանց): Փենսիլվանիայի պետական համալսարանի պրոֆեսոր Մարկ Գրինբերգը նման իրավիճակը անվանում է «ստանդարտ պատկեր»¹⁴: Այս պարագայում իրավական մեկնաբանման գործիքը զուտ լեզվական է. իրավական հետեվանքի համար անհրաժեշտ է միայն հասկանալ բառերի սովորական իմաստը¹⁵:

«Ստանդարտ պատկերի» միակ բարդությունը թերևս կարող է լինել այն, որ իրավական տեքստերը հաճախ գրված են իրավաբանական լեզվով, որը ճիշտ կարդալու համար անհրաժեշտ են մասնագիտական վերապատրաստումներ¹⁶: Սակայն իրավակիրառողների համար, որպես կանոն, մեծ դժվարություն չի առաջացնում իրավաբանական-տեխնիկական լեզվի ճիշտ ընկալումը, քանի որ նրանք, բացի վերապատրաստումներից, նաև սովոր են այդ լեզվին:

Թեև պետք է նկատել, որ իրավական տեքստերում նեղ մասնագիտական եզրույթները ևս շատ չեն: Դրանցում հիմնականում գործածվում են այնպիսի բառեր, որոնք համագործածական են:

(2) Մեկնաբանման «ստանդարտ պատկերը» և տեքստուալ մեկնաբանությունը

Մեկնաբանման «ստանդարտ պատկերը» արդյունավետ է միայն այն դեպքում, երբ գործ ունենք իրավաբանական պարզ տեքստերի հետ: Այն պահից, երբ իրավական նորմի տեքստը լեզվական իմաստով միանշանակ չէ, արդեն իսկ առաջանում են մեկնաբանման խնդիրներ:

¹⁴ Տե՛ս **Mark Greenberg**, Legislation as Communication? Legal Interpretation and the Study of Linguistic Communication, in *Philosophical Foundations Of Language In The Law* 217, 223:

¹⁵ Տե՛ս **Cf. Cass R. Sunstein**, Interpreting Statutes In The Regulatory State, 103 *Harv. L. Rev.* 405, 415 (1989):

¹⁶ Տե՛ս **Frederick Schauer**, Is Law A Technical Language?, 52 *San Diego L. Rev.* 501 (2015):

Նույնիսկ բովանդակային առումով հասարակ նորմերը լեզվական տեսանկյունից կարող են ունենալ բազմաստիճան մեկնաբանման անհրաժեշտություն: Մեկնաբանման «ստանդարտ պատկերը» այդ դեպքերում գործակցում է իրավական նորմերի տեքստաբանական մեկնաբանման կանոնի հետ, որը, սակայն, հիմնված լինելով լեզվաբանական կանոնների վրա, իրավական նորմերը կիրառողներին կանգնեցնում է մի շարք անլուծելի խնդիրների առջև:

(Ա) Լեզվագիտական կանոնների բարդությունները

Իրավական տեքստերի բառացի մեկնաբանման ժամանակ կիրառողները օգտագործում են մի շարք լեզվական կանոններ, որոնց նպատակն է բացահայտել օգտագործված արտահայտությունների իրական իմաստը: Այդ կանոնները մշակում են իրավագետ-լեզվաբանները, ինչպես օրինակ՝ ԱՄՆ Գերագույն դատարանի նախկին դատավոր Անտոնին Սկալիայի և պրոֆեսոր Բրայան Գարների համատեղ աշխատությունը, որը բովանդակում է հիսունյոթ մեկնաբանման կանոն¹⁷: Նման կանոններ սահմանում է նույնիսկ օրենսդիրը, ինչպիսիք, օրինակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ՝ Ակտերի մասին օրենք) 4-րդ գլխում ներառված օրենսդրական տեխնիկայի լեզվական կանոններն են, որոնք ևս կիրառվում են իրավական տեքստերը բացահայտելիս:

Այս կանոնները հիմնված են «լեզվամտածողության սովորույթների» վրա, որոնք կոչված են բացահայտելու բառերի իմաստը¹⁸: Սակայն իրական կյանքում մարդիկ չեն արտահայտում իրենց մտքերը լեզվական այդ խիստ կանոններով: Նույնիսկ իրավաբանները և օրենսդրական տեքստերի հետ աշխատող մասնագետները հաճախ շեղվում են այս կանոններից: Առօրյա կյանքում մարդկանց հասկանալու համար ոչ ոք չի դիմում այդ կանոնների օգնությանը: Ավելին, օրենքների տեքստեր մշակողները կարող են նույնիսկ չիմանալ այդ կանոնները կամ իմանալու դեպքում՝ համաձայն չլինել դրանց հետ¹⁹:

Օրինակ Ակտերի մասին օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ինքն իրեն պարտադրել է նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները: Վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածն իր հերթին նշում է, որ ամբողջ օրենսգրքում «դատարան» եզրույթը գործածելիս նկատի է ունենալու Վարչական

¹⁷ See **Antonin Scalia & Bryan A. Garner**, *Reading Law: The Interpretation Of Legal Texts* 140, 334 (2012):

¹⁸ See **Manning**, *Supra* Note 5, 180, նաև **Scalia & Garner**, *Supra* Note 31, 31:

¹⁹ See **Abbe R. Gluck & Lisa Schultz Bressman**, *Statutory Interpretation From The Inside — An Empirical Study Of Congressional Drafting, Delegation, And The Canons: Part I*, 65 *STAN. L. REV.* 901, 936 (2013), նաև **Lisa Schultz Bressman & Abbe R. Gluck**, *Statutory Interpretation from the Inside — An Empirical Study of Congressional Drafting, Delegation, and the Canons: Part II*, 66 *Stan. L. Rev.* 725, 755 (2014):

դատարանը, Վերաքննիչ վարչական դատարանը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պայատները միասին: Մակայն նույն օրենսգրքի արդեն 19-րդ հոդվածի 8-րդ մասում օրենսդիրը շեղվել է այս կանոնից՝ նշելով հետևյալը. «Վարչական դատարանը գործի քննության ընթացքում կարող է երրորդ անձին հանել դատավարության մասնակիցների կազմից, եթե ... դատարանը հանգում է այն համոզման, որ ...»: Բնական է, որ օրենսդիրն չի հաջողվել պահել իր իսկ խոստումը՝ «դատարան» ասելիս հասկանալ միմիայն երեք ատյանի դատարանները միասին, քանի որ ամբողջ օրենսգրքում «դատարան» բառը կրկնվում է 886 անգամ: Եվ դրա կարիքն էլ իրականում չկա, քանի որ նույն 19-րդ հոդվածի 8-րդ մասում ակնհայտ է, որ խոսքը Վարչական դատարանի մասին է, և «Վարչական» եզրույթի կրկնությունն էլ ավելի կծանրաբեռներ տեքստը:

(Բ) Տեքստուալիզմի բազմիմաստությունը

Փորձը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում միևնույն տեքստը կարելի է ընթերցել մեկից ավելի եղանակով: Դրա պատճառը բառերի բազմիմաստությունն է: Ուստի պետք է որոշել՝ ո՞ր իմաստով տեքստն ընկալել: Իսկ տեքստաբանական մեկնաբանումը ոչ մի կերպ չի բացահայտում՝ ինչպես հասկանալ տվյալ բառը:

Բավարար է միայն վկայակոչել երկու հայտնի տեսությունները, որպեսզի պարզ լինի բարձրացված խնդրի էությունը՝ հեղինակի նպատակ և կարդացողի ընկալում: Այս երկու կողմերի ըմբռնումների տարբերության հավանականությունը միշտ կա: Տեքստի հեղինակը կարող է ասել մի բան, որը կարդացողը կարող է հասկանալ տրամագծորեն հակառակ կերպ²⁰: Իսկ ո՞րն է դրանցից իսկական իմաստը:

Թեև շատերը կարող են պնդել, որ հեղինակի և կարդացողի ընկալումները, որպես կանոն, համընկնում են, և բախումները հազվադեպ են²¹, իրավական համակարգը պետք է պատրաստ լինի չհաջողված դեպքերին²²: Հնարավոր չէ բացառել այն իրավիճակը, երբ օրենսդիրը ցանկանում է կարգավորել հարցը որևէ կերպ, իսկ իրավահարաբերության մասնակիցը ողջամտորեն ընկալում է այլ կերպ²³: Այս դեպքում իրավակիրառողը պետք է կարողանա որոշել՝ ո՞ր իմաստով նորմը կյանքի կոչել:

Նման դեպքերի համար կարող են մշակվել և կիրառվել տարբեր կանոններ: Օրինակ, եթե իրավահարաբերության մասնակիցը ողջամտորեն չի հասկացել ինչ նկատի ուներ օրենսդիրը, նորմը պետք է ըն-

²⁰ Տե՛ս **Greenberg**, supra note 13, 230–31:

²¹ Տե՛ս, օրինակ, **Scott Soames**, Deferentialism: A Post-Originalist Theory of Legal Interpretation, 82 **Fordham L. Rev.** 597, 598 (2013):

²² Տե՛ս, օրինակ, **Gary Lawson & Guy Seidman**, Originalism As A Legal Enterprise, 23 **Const. Comment.** 47, 57 (2006):

²³ Տե՛ս, օրինակ, **Hillel Y. Levin**, Contemporary Meaning and Expectations in Statutory Interpretation, 2012 **U. Ill. L. Rev.** 1103, 1128:

կալվի նրա ակնկալիքներին համահունչ²⁴: Կամ միգուցե հակառակը՝ մասնակիցները պետք է պատասխանատվություն կրեն այն բանի համար, ինչը չէին կարող կանխատեսել²⁵: Յուրաքանչյուր հասարակություն իր իրավագիտակցությանը համապատասխան կկատարի իր որոշումը՝ կախված նրանից, թե ընկալման որ տեսությանն է առավել հակված²⁶: Եվ անկախ նրանից՝ ինչ ընտրություն կկատարի տվյալ հասարակությունը, կարևորն այն է, որ դա իրավունքի, այլ ոչ թե լեզվաբանության հարց է: Ինչպես պրոֆեսոր Գրինբերգը նշել է. «Լեզվի փիլիսոփայությունը ոչինչ չի կարող ասել այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ օրենսդրի կամքը»²⁷: Մեկնաբանման «ստանդարտ պատկերը» թողնում է մեզ այս բարդ խնդրի հետ միայնակ:

(3) «Ստանդարտ պատկերի» այլընտրանքը

Ինչպես նկատեցինք վերևում, տեքստուալիստական մեկնաբանումը միշտ չէ, որ հնարավորություն է տալիս կիրառողին հասկանալու իրավական տեքստը. նման դեպքերում «ստանդարտ պատկերը» չի գործում: Ինչպես նշում է պրոֆեսոր Ֆելլոնը, միայն իրավական կանոնները կարող են բացահայտել օրենսդրի իրավական կամքը²⁸: Սակայն խնդրահարույց դեպքերում, երբ իրավական ստանդարտները հստակ չեն, մեկնաբանողի համար ամենահեշտ լուծումը «մեկնաբանողական էկլեկտիզմն է», որը կիրառողի որոշումները դարձնում է կազուալ (case-by-case)²⁹: Մեկնաբանման բոլոր հնարավոր տարբերակներից կիրառողը պետք է ընտրի այն տարբերակը, որն առավել է համապատասխանում իրավունքի սկզբունքներին և ժողովրդավարության զարգացման միտումներին՝ միասին վերցրած³⁰:

Պրոֆեսոր Սանստեյնն իր հերթին պնդում է, որ ողջամիտ հնարավորություններից ճիշտ ընտրությունն այն է, որը «սահմանադրական համակարգը դարձնում է ավելի լավը»³¹: Եվ խնդիրը լուծելիս «դատավորները և իրավաբանները պետք է հիմնվեն իրենց սեփական նորմատիվ որոշման վրա»³²:

Համաձայնելով տեքստուալիզմի հանդեպ քննադատական մոտեց-

²⁴ Տե՛ս, օրինակ, **Larry Alexander**, Originalism, the Why and the What, 82 Fordham L. Rev. 539, 540 (2013):

²⁵ Տե՛ս, օրինակ, **Antonin Scalia**, A Matter Of Interpretation 17 (Amy Gutmann Ed., 1997), նաև՝ **Jeffrey Goldsworthy**, The Case for Originalism, In The Challenge Of Originalism: Theories Of Constitutional Interpretation, 47 (**Grant Huscroft & Bradley W. Miller Eds.**, 2011):

²⁶ Տե՛ս **William Baude**, Is Originalism Our Law, 115 Colum. L. Rev. 2349, 2363–65 (2015), նաև՝ **Stephen E. Sachs**, Originalism As A Theory Of Legal Change, 38 Harv. J.L. & Pub. Pol’y 817, 829–33 (2015):

²⁷ **Greenberg**, Supra Note 13, 233.

²⁸ Տե՛ս **Fallon**, Supra Note 6, 1241.

²⁹ Տե՛ս Id. 1308.

³⁰ Տե՛ս Id. 1305.

³¹ **Sunstein**, supra note 6, 193–94:

³² Id. 193:

մանը՝ այդուհանդերձ նշենք, որ նկարագրվածն ավելի շատ հիշեցնում է իրավաստեղծ, քան իրավակիրառ գործընթաց: Եթե կիրառողը ինքն է որոշում՝ հնարավոր տարբերակներից որն է ավելի լավը, ինքն էլ փաստորեն ստեղծում է իրավունքը իր պատկերացմամբ: Ինքնին պարզ է, որ նման իրավիճակը խնդիրներ է ստեղծում իշխանությունների տարանջատման և օրենքները ներկայացուցչական մարմնի կողմից ընդունելու ժողովրդավարական սկզբունքների տեսանկյունից: Ուստի պետք է գտնել այնպիսի տարբերակ, որը թույլ կտա կիրառողին լուծել բարձրացված խնդիրը՝ չառաջացնելով ժողովրդավարության դեֆիցիտ:

III. ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

(1) Ներածություն

Վերևում մենք նկատեցինք երկու իրարամերժ մոտեցում՝ զուտ տեքստի հիման վրա մեկնաբանում՝ մի կողմից, և մեկնաբանողի սեփական կամքով ստեղծված իրավական պատվիրանով անհստակ իրավական նորմի փոխարինում՝ մյուս կողմից: Դրանցից առաջինը անտեսում է լեզվական անորոշությունները, մյուսը իրավակիրառողին իրավունք ստեղծելու հնարավորություն է տալիս: Նշված երկու տարբերակների միջև անջրպետը չափազանց մեծ է: Այդ իսկ պատճառով մենք հակված ենք երրորդ տարբերակին, որը բացառում է կիրառողի կողմից «առաջին լավագույն քաղաքական որոշումն ընդունելու» հնարավորությունը և ստիպում է նրան՝ ջանք չխնայել ու գտնել տվյալ իրավիճակը լուծող իրավական գործիքը արդեն իսկ գոյություն ունեցող իրավական աղբյուրներից: Եթե տեքստուալ մեկնաբանությունը չի կարող ավարտել մեկնաբանման գործը միայնակ, իսկ դա հաճախ է պատահում, օգնության են հասնում գործող իրավունքը և դրանից բխող գործիքները³³:

Ցանկացած իրավական խնդիր ունի իր հարցերը, որոնց վերաբերյալ դատավորը կամ այլ կիրառողն ունի իր մոտեցումը: Սակայն օրենքը կիրառողը նման հարցերի շուրջ որոշում կայացնելիս չպետք է առաջին պատասխանը տա դրանց վերաբերյալ: Նա պետք է փնտրի իրավական համակարգում արդեն իսկ առկա առաջնային մոտեցումը, որից էլ պետք է բխի իր պատասխանը կոնկրետ իրավիճակում: Առաջնային այդ մոտեցումը կարող է բխեցվել ինչպես իրավական տարբերակներից, այնպես էլ դատական պրակտիկայից: Դատավորի և մյուս կիրառողների խնդիրը ոչ թե ինքնուրույն որոշելն է, թե կոնկրետ իրավիճակում ինչ իրավական հետևանքներ պետք է վրա հասնեն, այլ այդ հարցի պատասխանը իրավական դաշտում գտնելը³⁴:

(2) Մեկնաբանման գրված իրավունքը

Հայաստանում մեկնաբանման կանոնների մասին խոսելիս առաջին հերթին՝ բնականաբար, երևան է գալիս իրավական ակտերում

³³ Տե՛ս **William Baude & Stephen E. Sachs**, supra note 10, 1093:

³⁴ Տե՛ս Id 1096-97:

տեղ գտած կանոնների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Հայրենական իրավակիրառողը առավելապես ռոմանագերմանական իրավական մշակույթի կրող է և, դրա ավանդույթներին համապատասխան, ցանկացած հարցի պատասխան փնտրում է նախ և առաջ իրավական նորմերում: Նույնիսկ իրավական նորմերը ճիշտ կարդալու և կիրառելու համար մեզ անհրաժեշտ են գրավոր սահմանված դրույթներ, որոնք բացում են ճանապարհ դեպի այս կամ այն նորմի՝ օրենսդրի կողմից կանխորոշված իրավական իմաստը:

(Ա) Մեկնաբանման նորմերը

Մեկնաբանման գրված իրավունքի առաջին գործիքն ընդունված մեկնաբանման նորմերն են: Օրենսդիրը հասարակական հարաբերությունները կարգավորելու հետ մեկտեղ ընդունում է նաև կանոններ, որոնցով սահմանում է, թե ինչպես պետք է մեկնաբանել իրավական նորմերը: Ընդ որում, բացի օրենքներում տեղ գտած իրավական նորմերից, օրենսդիրը կարող է կանոնակարգել նաև այլ մարմինների ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի դրույթների մեկնաբանման գործընթացը: Դա բխում է ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի նկատմամբ օրենքների գերակայության սկզբունքից (*lex superior*):

Նույնը չի կարելի պնդել սահմանադրական նորմերի վերաբերյալ: Նույն *lex superior* սկզբունքը բացառում է, որ օրենսդիրը սահմանի սահմանադրական նորմերի մեկնաբանման պարտադիր կանոններ: Ինչպես նշել է ԱՄՆ Գերագույն դատարանը, օրենքով սահմանված մեկնաբանման կանոնները կարող են կիրառվել միայն օրենսդրի ընդունած օրենքների նկատմամբ³⁵:

ՀՀ Սահմանադրությունը 2015 թվականի փոփոխություններից հետո սահմանադրական նորմերի մեկնաբանման մեկ կանոն է սահմանում (մինչ այդ որևէ կանոն սահմանված չի եղել). հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (հոդված 81, մաս 1): Այս կանոնը թեև նեղ շրջանակ է ընդգրկում, սակայն լուծում է կարևոր խնդիր. այն հնարավորություն է տալիս բացառելու սահմանադրական նորմերի և միջազգային դատարանների (այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)) իրավական դիրքորոշումների միջև հակասությունը: Միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան ժամանակակից պայմաններում արագ զարգանում է, որի պատճառով նույն սահմանադրական իրավունքներին հաղորդվում են բոլորովին նոր իրավական իմաստներ: Մեկնաբանման այս կանոնը թույլ է տալիս ՀՀ իրավակիրառ պրակտի-

³⁵ See *William Baude & Stephen E. Sachs*, *supra* note 10, 1119:

կային ընթանալ նշած զարգացումներին համահունչ:

Օրենսդիրը մեկնաբանման առավել լայն շրջանի կանոններ է սահմանում: Մինչև 07.04.2018 թվականը գործած «Իրավական ակտերի մասին» օրենքի 86-րդ հոդվածը նախատեսում էր նորմերի մեկնաբանման հետևյալ կանոնները.

(1) նորմը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները.

(2) նորմի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը.

(3) եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները.

(4) իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար դրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար:

Իսկ գործող Ակտերի մասին օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավաբարբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Մեկնաբանման նախորդ կանոնների համեմատ՝ այստեղ, փաստորեն, օրենսդիրը կատարել է հետևյալ փոփոխությունները.

(1) հատուկ ընդգծել է իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակի կարևորությունը, թեև նախկին կանոններում նույնպես կարելի էր դա նկատել, երբ խոսքը օրենքի պահանջները հաշվի առնելու և նորմի իմաստը չփոխելու մասին էր (օրենսդիրը, կարծես, ավելի հստակեցրել է իրավական նորմի նպատակային մեկնաբանման կանոնը).

(2) ամրագրել է համատեքստային մեկնաբանման կանոնը, որը թույլ է տալիս տվյալ ոլորտը կարգավորող ողջ համակարգի օգնությամբ բացահայտել կոնկրետ դրույթի իմաստը.

(3) հրաժարվել է վերնագրերի միջոցով մեկնաբանման արգելքի սահմանումից, ինչը, սակայն, դեռ չի նշանակում, որ օրենսդիրը հավանություն է տալիս վերնագրերի միջոցով մեկնաբանման կանոնին (հա-

կառակ դեպքում կսահմաներ նման կանոն), սակայն ուղղակի չի էլ արգելում:

Մեկնաբանման այս գրված նորմերն առաջինն են, իհարկե, օգնության հասնում կիրառողին, երբ «ստանդարտ պատկերը» չի գործում, և նորմը լրացուցիչ բացահայտման կարիք ունի: Սակայն նույնիսկ այս կանոններից ակնհայտ է, որ դրանք վերջնականորեն չեն լուծում խնդիրը, դրանք իրենց հերթին հղում են ակտն ընդունող մարմնի նպատակին և ոլորտը կարգավորող իրավական համակարգի համատեքստին: Դա նշանակում է, որ գրված այս կանոններն առնվազն կարիք ունեն լրացման այլ նորմերով, որպեսզի կիրառողի առջև բացեն մեկնաբանվող նորմի իրական իմաստը:

(Բ) Մեկնաբանման նորմերը լրացնող գրված իրավունքը

Նման իրավիճակներում, երբ մեկնաբանման գրված կանոնները չեն լուծում կիրառողի առջև ծառայած մեկնաբանման խնդիրը, վերջինիս տրամաբանական հաջորդ քայլը հարցերի պատասխանները իրավական այլ նորմերում փնտրելն է: Իրավական նորմերը հաճախ փոխկապակցված են, և մի նորմի տեքստը կարող է միաժամանակ բացահայտել մեկ այլ փոխկապակցված նորմի իմաստը:

(Բ1) Իրավունքի սկզբունքները

Իրավական նորմերը մեկնաբանելիս հաճախ օգնության են հասնում իրավական տարբեր ակտերում ամրագրված իրավունքի սկզբունքները, որոնք խոսուն կերպով ցույց են տալիս այն տեսլականը, որը սահմանադիրը կամ օրենսդիրը որդեգրել է տվյալ տեսակի հարաբերությունները կարգավորելիս: Դրանք որպես կանոն չեն կարգավորում կոնկրետ հարցեր, սակայն իրավական ակտերի սկզբում են գետեղվում, որպեսզի կիրառողների համար կանխատեսելի լինի հետագա կարգավորման գաղափարախոսական ուղղվածությունը: Ըստ այդմ էլ, կիրառողը կոնկրետ հարցեր կարգավորող նորմերը մեկնաբանելիս դժվարությունների առջև կանգնելու դեպքում կարող է իրավունքի սկզբունքների օգնությամբ ճիշտ ընկալել օրենսդրի մոտեցումները:

Իրավական նորմերի մեկնաբանման համար կիրառելի սկզբունքներից նախ և առաջ պետք է մատնանշել Սահմանադրությամբ ամրագրված հիմնադրույթները: Դրանք կանխորոշում են իրավական կարգավորման ողջ հայեցակարգը: Սակայն այստեղ պետք է զգոն լինել, որպեսզի կոնկրետ հարց կարգավորող նորմի Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքին համահունչ մեկնաբանումը չփոխարինվի օրենսդրական նորմը Սահմանադրությանը համապատասխանեցնելով: Կիրառողը, բնականաբար, նման լիազորություն չունի և եթե պարզում է, որ օրենսդրի կարգավորումը դուրս է եկել Սահմանադրությամբ ամրագրված որևէ սկզբունքի սահմաններից, խնդրի լուծումը Սահմանադրական դատարանի լիազորությունների դաշտում է lex superior կոլիզիոն կանոնին համապատասխան:

Մակայն կիրառողը իրավական նորմի մեկնաբանման բարդությունների դեպքում կարող է «գուշակել»՝ ինչ նկատի պետք է ունենար օրենսդիրը այս կամ այն կարգավորումը տալիս՝ առաջնորդվելով օրենքների իրավաչափության և սահմանադրականության կանխավարկածով: Ի վերջո, եթե իրավական նորմի տեքստը թույլ է տալիս մեկնաբանման երկու տարբերակ, որոնցից մեկը համապատասխանում է սահմանադրական պահանջներին, մյուսը՝ ոչ, ապա չպետք է շարժվել այն կանխավարկածով, որ օրենսդիրը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից: Ընդհակառակը, կիրառողը չպետք է մեկնաբանի նորմն այնպես, որ դա արհեստականորեն դառնա հակասահմանադրական: Եթե օրենքի տեքստը թույլ է տալիս այն մեկնաբանել Սահմանադրության շրջանակներում, կիրառողի պարտականությունն է անել դա:

Իրավունքի սկզբունքները հաճախ շարադրվում են նաև օրենքներում, որոնք արդեն բացահայտում են այդ տեսակ հարաբերությունները կարգավորելու օրենսդրի հիմնարար պատկերացումները: Այս դեպքում կիրառողն առավել ճկուն է և *lex superior* կոլիզիոն կանոնին դիմելու փոխարեն կարող է ավելի հեշտությամբ հարթել օրենքում առկա ներքին տեքստային խրթինությունը: Եվ այստեղ օրենսդրի կամքից դուրս գալու կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խնդիր չկա, քանի որ նույն օրենսդիրն իր կամքն արտահայտել է նաև իրավունքի սկզբունքի միջոցով:

Այդուհանդերձ, իրավական նորմի՝ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան մեկնաբանումը չպետք է փոխարինի նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի կոլիզիոն լուծմանը՝ տրված Ակտերի մասին օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում (նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի բախման դեպքում գործում է ընդհանուր մասի նորմը): Բայց պետք է հստակ տարանջատել այն դեպքերը, երբ իրավական ակտի հատուկ մասում ներառված նորմը միանշանակ է և ուղղակիորեն հակասում է նույն իրավական ակտի ընդհանուր մասում ամրագրված սկզբունքին, և երբ իրավական ակտի հատուկ մասում զետեղված նորմը բազմիմաստ է, որի տեքստը թույլ է տալիս մեկնաբանել այն նույն իրավական ակտի ընդհանուր մասում ամրագրված սկզբունքին համահունչ:

Իրավունքի սկզբունքներին համապատասխան մեկնաբանման օրինակ կարող է լինել «Ոստիկանության մասին» օրենքի 29-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված կարգով հատուկ միջոցների կիրառման կանոնները՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Վարչարարության մասին օրենք) 8-րդ հոդվածում ամրագրված՝ համաչափության սկզբունքին համահունչ մեկնաբանելու անհրաժեշտությունը: Արդյունքում կիրառողի համար

պարզ է դառնում օրենսդրի կամքն առ այն, որ ոստիկանության ծառայողի կողմից հատուկ միջոցների կիրառումը պետք է ուղղված լինի Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, իսկ միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

(Բ2) Ընդհանուր դրույթները

Իրավական ակտերում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դրույթների, որոնք իրենց կարգավորումներով ընդգրկում են մյուս՝ ավելի կոնկրետ դրույթների բովանդակությունը: Սովորաբար դրանք անվանում ենք «ընդհանուր դրույթներ», որոնք տեղ են գտնում իրավական ակտերի ընդհանուր մասերում: Դրանք կարգավորում են այնպիսի հարցեր, որոնք բազային նշանակություն են ունենում հետագա նորմերի ընկալման համար, սակայն իրենց էությանը սկզբունքներ չեն համարվում:

Այսպես օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎ օրենսգիրք) 9-րդ հոդվածը բնութագրում է զանցանքը որպես պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Իսկ ՎԻՎ օրենսգրքի հատուկ մասում թվարկված են շուրջ երկու հարյուր զանցակազմեր, որոնք էլ լրացվում են այլ օրենքներում սահմանված մի շարք այլ զանցակազմերով: Ցանկացած զանցակազմի բացահայտման ժամանակ բառերի կամ արտահայտությունների ընկալման խնդիրներ առաջանալիս կիրառողը դրանք կարող է լուծել ընդհանուր դրույթում վարչական իրավախախտման բնութագրիչների հաշվառմամբ (հանրային կամ մասնավոր շահերի դեմ ոտնձգություն, մեղավորություն և այլն):

Մեկնաբանման այս կանոնի կիրառման նկատմամբ ևս ամբողջությամբ տարածվում է սկզբունքների օգնությամբ մեկնաբանման կանոնի մասով վերևում նշված այն դատողությունը, որ դա չպետք է փոխարինի Ակտերի մասին օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կոլիզիոն կանոնին:

(Բ3) Համանման հասկացությունները

Իրավական տարբեր նորմերում հաճախ կարելի է հանդիպել համանման հասկացությունների: Դրանք կարգավորում են նույնասեռ հասարակական հարաբերություններ, սակայն մի նորմում տեղ գտած հասկացությունը կարող է առավել լավ բացահայտված լինել, քան մյուսում: Այս դեպքում լավ բացահայտված նորմը կարող է օգտակար լինել մյուսում տեղ գտած հասկացությունը ճիշտ ընկալելու և կիրառելու համար: Բհարկե, նման դեպքերում պետք է ուշադիր լինել, քանի որ կարող են հասարակական հարաբերություններում խորքային տարբերություններ լինել, որոնք պետք է հաշվի առնվեն: Բայց նույնիսկ տար-

բերություններով հանդերձ լավ պարզաբանված նորմերը կարող են օգտակար լինել համանման հասկացությունները մեկնաբանելիս:

Օրինակ՝ ՎԻՎ օրենսգիրքը որևէ կերպ չի բացահայտում տևող և/կամ շարունակվող իրավախախտումների էությունը: Այն ընդամենը սահմանում է, որ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում (հոդված 37, մաս 1): Ըստ այդմ, ՎԻՎ օրենսգրքի կարգավորումներից կարելի է անել միայն հետևյալ երկու հետևությունը՝ (1) օրենսդիրը հնարավոր է համարում իրավախախտումների տևող և շարունակվող լինելը, (2) տևող և շարունակվող իրավախախտումները ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում տարանջատված են, ուստի դրանք չեն կարող լինել նույնական: Տևող և շարունակվող իրավախախտումներին առնչվող որևէ այլ հարց, այդ թվում՝ դրանց սահմանումները, կարգավորած չէ ՎԻՎ օրենսգրքով: Ընդ որում, Սահմանադրական դատարանը անդրադարձել է այս հարցին և արձանագրել, որ տևող և շարունակվող իրավախախտումների բացահայտված չլինելը օրենքի բաց է, որը պետք է հաղթահարվի օրենսդրի կողմից³⁶: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի որոշումից ավելի քան հինգ տարի անց օրենսդրական բացը հաղթահարված չէ:

Մեկնաբանման տեքստուալ կանոնն այս դեպքում քիչ օգուտ է տալիս. այն ընդամենը հուշում է, որ մի դեպքում արարքի բնորոշ հատկանիշ պետք է դիտարկել դրա տևողականությունը, իսկ մյուս դեպքում՝ շարունակականությունը: Սակայն նշված երկու եզրույթներն իրենց հերթին մեկնաբանման կարիք ունեն և ըստ էության լուծում չեն տալիս խնդրին:

Տևող և շարունակվող իրավախախտումների ինստիտուտը լայնորեն կիրառվում է նաև քրեական իրավունքում: Ընդ որում, քրեական իրավունքով սահմանված հանցագործությունները և վարչական իրավունքով սահմանված զանցանքները իրավախախտման տեսակներ են, որոնց միակ տարբերությունը հանրային վտանգավորության աստիճանն է: Իսկ իրավախախտումը տևող կամ շարունակվող բնորոշելու համար հանրային վտանգավորությունը նշանակություն չունի: Հետևաբար՝ քրեական իրավունքում այս ինստիտուտների կարգավորումները կարող են օգնել վարչական իրավախախտումները որպես տևող կամ շարունակվող բնորոշելու հարցում:

Թեև Քրեական օրենսգիրքը նույնպես չի բացահայտում տևող և շարունակվող հանցագործությունների հասկացությունները, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր գործառնությունների իրացման շրջանակներում անդրադարձել

³⁶ Տե՛ս 08.04.2014 թվականի ՍԴՈ-1143 որոշումը:

է այս հարցին՝ պարզաբանելով այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս տարանջատել սևող և շարունակվող հանցագործությունները³⁷:

Քրեական իրավակիրառ պրակտիկայում սևող և շարունակվող հանցագործությունների ձեռքբերումներից լիարժեքորեն կարելի է օգտվել վարչական իրավակիրառ պրակտիկայում: Վարչական դատարանը, մեկնաբանելով ՎԻՎ օրենսգրքում տեղ գտած՝ սևող և շարունակվող զանցանքները, ամբողջությամբ օգտագործել է սևող և շարունակվող հանցագործությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատողությունները և այդ կերպ բացահայտել է սևող և շարունակվող զանցանքները³⁸:

(Բ4) Փոփոխությունների նպատակը

Իրավական նորմի անհստակ լինելու դեպքում դրա բովանդակությունը ճիշտ ընկալելու համար կիրառողը կարող է դիմել նաև օրենսդրական փոփոխությունների նպատակին: Օրենսդրի կատարած փոփոխությունները թույլ են տալիս հասկանալ՝ ինչ խնդիր է տեսել օրենսդիրը իրավական նորմում և ինչ եղանակով է դրան արձագանքել: Օրենսդիրը, հետևելով իրավակիրառ պրակտիկային, արձագանքում է դրանում տեղ գտած դատողություններին օրենսդրական փոփոխություններով: Արդյունքում իրավական նորմի որոշակի մեկնաբանմանը համամիտ չլինելու դեպքում նա միջամտում է և փոփոխում այդ նորմն այնպես, որպեսզի իրավակիրառ պրակտիկան փոխվի և համապատասխանեցվի իր կամքին:

Փոփոխությունների միջոցով օրենսդրի կամքի բացահայտման հատկանշական օրինակ է վարչական մարմինների լրության հետևանքով ֆիկտիվ վարչական ակտերի ինստիտուտի առնչությամբ օրենսդիր և դատական իշխանությունների իրավական հակամարտությունը: Այս ինստիտուտը ամրագրվել է 2004 թվականին՝ Վարչարարության մասին օրենքի ընդունմամբ: Օրենքի 48-րդ հոդվածի տրամաբանությամբ, դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթով օրենսդրությամբ սահմանված ժամկետում վարչական ակտ չկայացնելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, ինչպես նաև՝ եթե դիմումը վերաբերում է օրենքով նախատեսված որևէ փաստաթղթի տրամադրմանը, որն առնչվում է որևէ փաստի (ծնունդ, մահ, անձի բացակայություն տվյալ վայրից և այլն) հաստատմանը կամ արձանագրմանը, ապա դիմումի հիման վրա համապատասխան ակտը չստացած կամ այդ ակտի համար դիմում ներկայացրած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթղթերը չունենա-

³⁷ Տե՛ս, օրինակ, 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇՂ/0055/01/11 որոշումը, 2016 թվականի նոյեմբերի 1-ի ԿՂ3/0034/01/15 որոշման 13-րդ կետը:

³⁸ Տե՛ս ՎՂ/4402/05/17 գործով Վարչական դատարանի 06.09.2017 թվականի վճիռը:

լու համար: Այս դրույթը առաջին անգամ փոփոխվել է 2005 թվականին, մասնավորապես՝ հստակ սահմանվել է, որ վերը նշված իրավական հետևանքները վրա են հասնում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից համապատասխան ակտ չընդունելու դեպքում: Սակայն Վճռաբեկ դատարանը, քննարկելով վարչական ֆիկցիայի ինստիտուտը, արձանագրել է, որ տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած ակտի ընդունված լինելը հաստատող նորմ, և հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի վրա, չխախտվեն այլոց իրավունքներն ու ազատությունները, հետևաբար՝ դրա բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը³⁹: Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը, ըստ էության, չեղարկեց Վարչարարության մասին օրենքի 48-րդ հոդվածի իմաստով ֆիկցիայի կիրառումը, քանի որ դիմողը պետք է, փաստորեն, հիմնավորեր դատարանում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, ինչը դիմողին դնում է նույն իրավիճակում, երբ վարչական ակտի ընդունումը վարչական մարմինը մերժում է⁴⁰: Այս մոտեցումը Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև 2013 թվականին՝ մյուս դատարանների իրավակիրառ պրակտիկան դարձնելով կայուն⁴¹: Դրանից հետո՝ 2017 թվականին, հարցին միջամտեց օրենսդիրը՝ լրիվ նոր բովանդակությամբ շարադրելով 48-րդ հոդվածը⁴²: Փոփոխության մեզ հետաքրքրող մասը այն է, որ դրանով վարչական մարմնի լրության հետևանքով վարչական ակտն ընդունված համարվում է միայն այն դեպքում, երբ դիմումը պարունակում է դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան), դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք պահանջվում են օրենքով), իսկ հայցվող վարչական ակտով տրամադրվող իրավունքը ակնհայտորեն ոչ իրավաչափ չէ: Դրանով իսկ օրենսդիրն առավել պարզ բացահայտեց իր կամքն այն հարցում, որ վարչական մարմնի լրությունը չի կարող համարվել վարչական ակտի ֆիկտիվ մերժում:

(3) Մեկնաբանման չգրված իրավունքը

³⁹ Տե՛ս ՎԴ/5557/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը:

⁴⁰ Տե՛ս **Karen Zariqyan**, *The Peculiarities of Application of the Concept of Fiction in the Judicial Practice of the Republic of Armenia; Practical Issues Related to the Improvement of Certain Elements of Fiction in Administrative Law*, *South Caucasus Law Journal*, 08/2017, Constitutional Reforms in South Caucasian Countries, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ), 2017, 290:

⁴¹ Տե՛ս ՎԴ/2731/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը:

⁴² Տե՛ս ՀՀՊՏ 2017.11.22/69(1344), հոդ. 1159:

Ինչպես նկատեցինք վերևում, կիրառողը բարդ նորմեր մեկնաբանելիս առաջին հերթին գործում է Ակտերի մասին օրենքով սահմանված մեկնաբանման նորմերով, իսկ եթե դրանք չեն լուծում խնդիրը՝ օգտվում է այն իրավական նորմերից, որոնք հուշում են օրենսդրի կոնկրետ հարցը կարգավորելու կամքի մասին: Սակայն պրակտիկայում քիչ չեն նաև դեպքերը, երբ ոչ Ակտերի մասին օրենքով սահմանված մեկնաբանման կանոնները, ոչ էլ գրված այլ նորմերը չեն բացահայտում կոնկրետ իրավիճակում օրենսդրի մոտեցումը: Այս պարագայում կիրառողին մնում է միայն դիմել մեկնաբանման չգրված այնպիսի դրույթների օգնությանը, որոնք բխում են իրավական ավանդույթներից, դրանց շրջանակներում ձևավորված իրավական ընկալումից: Թեև դրանք ուղղակի գրված չեն իրավական նորմերում, սակայն կազմում են իրավունքի համակարգի մասը օրենսդրի լուրջան ուժով, և այդ կանոնները չկիրառելու համար անհրաժեշտ է, որ օրենսդիրը ինչ-որ կերպ արտահայտի հակառակ կամքը⁴³:

Այս նորմերի աղբյուրը, որպես կանոն, իրավունքի հայեցակարգն է, որը, չկաշկանդվելով գրված իրավունքով, մշակում և կիրառողի տրամադրության տակ է դնում մի շարք իրավական դրույթներ, որոնք կարող են կյանքի կոչվել նույնիսկ առանց օրենքներում ուղղակիորեն գրված լինելու:

Նման նորմերի շարքում կարևոր տեղ են զբաղեցնում մեկնաբանման չգրված կանոնները, որոնք կիրառողներին օգնության են հասնում այն իրավիճակում, երբ գրված իրավունքի միջոցով ոչ մի կերպ չի հաջողվում բացահայտել իրավական նորմի իրական իմաստը: Մտորն կներկայացվեն մեկնաբանման չգրված այն կանոնները, որոնք բխում են իրավունքի հայեցակարգից և ուղղակի կամ անուղղակի կիրառվում են պրակտիկայում:

(Ա) Չգրված իմաստը

Երբեմն իրավական նորմերի հիմքում օրենսդիրը կարող է ի սկզբանե չդնել այնպիսի իմաստ, որը հետագայում, սակայն, ողջամտորեն ենթադրվում է: Առաջին հայացքից դա անտրամաբանական է, քանի որ հարց է առաջանում՝ եթե օրենսդիրը օրենքի տեքստը կազմելիս մտքում չի ունեցել նման իմաստ, ինչու հետագայում դա պետք է ենթադրվի: Բանն այն է, որ իրավական նորմերի տեքստերը օբյեկտիվորեն չեն կարող ընդգրկել բոլոր հնարավոր հարցերի պատասխանները, սակայն նորմի ընդհանուր տրամաբանությունից կարող է պարզ լինել, թե կոնկրետ իրավիճակում ինչ լուծում է ուզում տեսնել օրենսդիրը:

Փորձենք պարզաբանել այս մոտեցումը մի հիպոթետիկ օրինակի հիման վրա: Պատկերացնենք, որ տարածքի սեփականատերը կարգադրում է անվտանգության աշխատակցին չթողնել, որ որևէ մեկ

⁴³ Տե՛ս **William Baude & Stephen E. Sachs**, *supra* note 10, 1108:

տրանսպորտային միջոց կայանի տարածքում: Սակայն դրանից հետո տարածք է փորձում մուտք գործել շտապօգնության մեքենան բուժօգնություն ցուցաբերելու համար: Եթե անվտանգության աշխատակիցը թույլ տա շտապօգնության մեքենայի մուտքը տվյալ տարածք, արդյոք նա կխախտի՞ գործատուի հրամանը: Հարցի ողջամիտ պատասխանը կլինի՝ ոչ, քանի որ շտապօգնությունը բացառություն է:

Պրոֆեսոր Ֆելոնը համարում է, որ նման դեպքերում շտապօգնության մեքենայի բացառություն լինելը առանձին «ողջամիտ իմաստ է», որը թեև ի սկզբանե չի դրվել կանոնի հիմքում, սակայն ենթադրվում է⁴⁴: Թեև շտապօգնության մեքենայի մուտքը թույլատրելի բառացի չի համապատասխանում սեփականատիրոջ հրահանգին, սակայն այն համահունչ է և չի հակասում նրա սահմանած կանոնին⁴⁵: Դա բխում է հասարակությունում արդեն իսկ ընդունված այն կանոններից, որոնք տարբեր իրավիճակներում շտապօգնության մեքենայի կամ այլ միջոցների մասով սահմանում են հատուկ բացառություններ (շտապօգնության մեքենան կարող է անցնել կարմիր լույսի դեպքում, հրշեջ մեքենան կարող է ազդանշան տալ գիշերվա ժամերին և այլն): Այս կանոնները հաճախ սահմանված են իրավական նորմերում, սակայն նույնիսկ սահմանված չլինելու դեպքում գործում են պրակտիկայում: Ֆելոնի այս կանոնը գերազանցապես հիմնված է մեր թաքնված ինտուիցիայի վրա, որը բացատրելու համար հատուկ հասկացությունների կարիք չկա: Կարևորն այն է, որ մենք բոլորս գիտակցում ենք, որ այդ դեպքում չի ոտնահարվում իրավունքը⁴⁶:

Որպեսզի օրինակը չթվա չափազանց տեսական, բերենք մեկ այլ օրինակ մեր իրավակիրառ պրակտիկայից: Վարչական գործերից մեկով հայցվորները սկզբում մեղադրվել են մաքսանենգության մեջ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները մաքսային հսկողությունից թաքցնելու համար: Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.05.2016 թվականը գործած խմբագրությամբ մաքսանենգություն է որակվել *inter alia* Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողությունից թաքցնելը, եթե դա կատարվել է խոշոր չափերով (ապրանքների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը): Նշված դրույթն ամբողջությամբ ուժը կորցրած է ճանաչվել 16.05.2016 թվականին ընդունված ՀՕ-83-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 25.05.2016 թվականին: Միաժամանակ, Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածը նույն արարքի համար նախատեսում է վարչական պատասխանատվություն, եթե բացակայում են հանցագործության հատկանիշ-

⁴⁴ Տե՛ս **Fallon**, supra note 6, 1260–62:

⁴⁵ Տե՛ս **Finnis**, supra note 9, 18:

⁴⁶ Տե՛ս **William Baude & Stephen E. Sachs**, supra note 10, 1107:

ները: Այսինքն՝ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի գործողության ժամանակ նշված հանցակազմի և զանցակազմի միակ տարբերությունը եղել է ապրանքների արժեքը՝ եթե այն գերազանցել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, պատասխանատվությունը քրեական է, եթե ոչ՝ վարչական: Գործով հայցվորները, հաշվի առնելով այն, որ Մաքսային օրենսգրքի նշված դրույթը Քրեական օրենսգրքի փոփոխության հետ մեկտեղ որևէ ձևափոխման չի ենթարկվել, իսկ իրենց մեղսագրվող արարքը թույլ է տրվել դեռևս այն ժամանակ, երբ գործել է Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված հանցակազմը, պնդել են, որ Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտում թույլ չեն տվել: Վարչական դատարանը խնդրի լուծման համար հիմք է ընդունել այն մոտեցումը, որ մինչև 25.05.2016 թվականը, փաստորեն, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար գործել է հանրային-իրավական պատասխանատվության երկու տարբերակ. խոշոր չափերի դեպքում՝ քրեական, ոչ խոշոր չափերի դեպքում՝ վարչական: Իսկ 25.05.2016 թվականից հետո նշված արարքը, փաստորեն, լիովին ապաքրեականացվել է և ամբողջությամբ վարչական պատասխանատվության դաշտ է տեղափոխվել: Արարքն ապաքրեականացնելը և այն որպես վարչական իրավախախտում որակելն ինքնին ենթադրում են պատժի մեղմացում, քանի որ հակառակ դեպքում արարքի ապաքրեականացումը կլինի ձևական: Բացի այդ, Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.05.2016 թվականը գործած խմբագրությունը նշված արարքի համար սահմանել է *inter alia* ազատագրկման տեսակի պատժամիջոց, ինչը, բնականաբար, բացակայում է Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածում: Իսկ մինևույն արարքի համար ազատագրկում տեսակի պատիժը տուգանքով փոխարինելը, անշուշտ, պատժի մեղմացում է: Արդյունքում դատարանը եզրակացրել է, որ օրենսդիրը Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելով ոչ թե հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և, ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը, հետևաբար նաև՝ պատժի տեսակը⁴⁷:

Փաստորեն, Վարչական դատարանը այս գործով կիրառել է մեկնաբանման քննարկվող կանոնը: Արդյունքում, թեև օրենքի տեքստում ուղղակիորեն նշված չի եղել, որ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի գործողության ժամանակ նման հանցագործություն թույլ տված անձինք պետք է ենթարկվեն վարչական պատասխանատվության՝ համաձայն Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի, սակայն այդ իմաստը ենթա-

⁴⁷ Տե՛ս ՎԴ/6548/05/16 վարչական գործով Վարչական դատարանի 2017 թվականի մարտի 30-ի վճիռը:

դրվում է օրենսդրի մոտեցումից: Ինչպես դատարանը նշել է, օրենսդիրը ոչ թե ցանկացել է մաքսային հսկողությունից թաքցնելով մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը այլևս չհամարել հանրային վտանգավոր արարք, այլ մեղմել դրա համար սահմանված պատիժը:

(Բ) Travaux préparatoires կանոնը

Օրենքի ընդունումը բարդ գործընթաց է, որի ժամանակ ստեղծվում են մի շարք փաստաթղթեր, որոնցում արտացոլվում են տվյալ օրենքի ընդունմանն ուղղված բոլոր էական հարցերը՝ ո՞վ է նախաձեռնել գործընթացը, ի՞նչ խնդիր է նա նկատել և փորձում լուծել, ի՞նչ եղանակով է խնդրի լուծումը տրվելու և այլն: Օրենսդրական գործընթացում, քննարկվող նախագծից բացի, ստեղծվում են նաև դրա վերաբերյալ եզրակացություններ, կարծիքներ, որոնք իրենց հերթին քննարկվում են հանձնաժողովներում, և վերջնական տարբերակը դրվում է քվեարկության: Արդյունքում ընդունված օրենքի իրական իմաստը լիարժեք կարող է արտացոլված լինել այս տեսակի փաստաթղթերում: Ի վերջո, հենց այս փաստաթղթերն են նաև ուսումնասիրում պատգամավորները մինչ քվեարկելը:

Ամերիկացի պրոֆեսորներ Գլաքը և Բրեսմանը նշում են, որ ԱՄՆ-ում օրենքի ընդունման գործընթացում, երբ սկզբնական քննարկումը տեղի է ունենում համապատասխան հանձնաժողովում, դրա անդամները նույնիսկ չեն էլ ուսումնասիրում քննարկվող նախագծի տեքստը, այլ բանավիճում և հաստատում են ընթացքում կազմված ամփոփաթերթերը: Դրանից հետո ամփոփաթերթերը վերածվում են օրենսդրական տեքստերի, որոնք պատգամավորներից գրեթե ոչ մեկը չի ուսումնասիրում. նրանք հիմնվում են հանձնաժողովի ամփոփաթերթերի վրա⁴⁸: Արդյունքում օրենսդրական այս պատմությունը կարող է պարզ ցույց տալ այն մանրամասները, որոնք օրենսդիրները հաշվի են առել օրենքն ընդունելիս, սակայն դրանք անմիջականորեն տեղ չեն գտել օրենքի տեքստում:

Կարծում ենք, որ այս մոտեցումը համապատասխանում է նաև մեր իրականությանը: Ազգային ժողովում օրենքների ընդունման գործընթացում կազմակերպվող քննարկումներից կարելի է նույն հետևությունը անել, որ ո՛չ հանձնաժողովներում, ո՛չ էլ Ազգային ժողովում քննարկման հիմնական առարկա չեն դառնում օրենքի տեքստուալ ձևակերպումները. պատգամավորները քննարկում են կարգավորման բուն առարկան: Մրա շնորհիվ օրենսդրական գործընթացում ստեղծված փաստաթղթերը, ինչպես նաև դրանց շուրջ ծավալված քննարկումները կարող են ամբողջությամբ բացահայտել օրենսդրի կամքը:

Այստեղ կցանկանայինք շեշտել, որ անհրաժեշտ է ներդնել օրենսդրական գործընթացի առավել թափանցիկ համակարգ: Դա պետք

⁴⁸ See *Gluck & Bressman*, Part I, supra note 19, 968:

է ներառի ընդունված ցանկացած օրենքի վերաբերյալ պարզ և ամփոփ տեղեկությունների հրապարակային բազա, որից հեշտությամբ կարող են օգտվել բոլորը, այդ թվում՝ կիրառողները (բացառությամբ, իհարկե, գաղտնի փաստաթղթերի և փակ քննարկումների): Ընդ որում, եզրակացություններն ու հիմնավորումները պետք է լինեն բովանդակային և ոչ հոչակագրային բնույթի, ինչպես կարելի է հաճախ հանդիպել մեր պրակտիկայում⁴⁹: Ինչպես նաև օրենքների ընդունման ընթացքում հիմնական քննարկումները ևս պետք է դառնան առավել մատչելի, որպեսզի կիրառողը կարողանա առանց դժվարության ծանոթանալ ցանկացած օրենքի նախագծի քննարկման արդյունքներին:

Իրավական նորմի մեկնաբանման այս մեթոդը յայնորեն կիրառվում է միջազգային իրավունքում և անվանվում է *travaux préparatoires*⁵⁰: Այն հաջողությամբ օգտագործում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, օրինակ, Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ Մեծ պալատը *travaux préparatoires* հիման վրա արձանագրել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (b) ենթակետի միակ նպատակն է տալ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացության մեկնաբանությունը, ինքնուրույն այն չի ճանաչում կամ բացառում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հաժարվելու իրավունքը⁵¹:

Մեկնաբանման այս կանոնը թեև ուղղակիորեն սահմանված չէ մեր օրենսդրությունում, կիրառողները, սակայն, չունեն որևէ արգելք օրենքի տեքստը հասկանալու համար դիմելու դրա ընդունման փաստաթղթերի օգնությանը: Բայց դրա համար, ինչպես նշվեց վերը, այդ փաստաթղթերը պետք է լինեն բավարար չափով բովանդակալից, մատչելի և հասանելի:

(Գ) Ռեալիստական մեկնաբանման կանոնը

Մեկնաբանման ռեալիստական կանոնը ռեալիզմի իրավական դպրոցի հիմնական արտադրանքն է: Այս ուսումնունքի ներկայացուցիչները համարում են, որ իսկական իրավունքը ոչ թե օրենսդրի ընդունած վերացական նորմերն են, այլ իշխանության իրավասու մարմինների կողմից իրավական կոնկրետ հարցերի կարգավորումը: «Կարգավորել ապագան մասամբ մանկական երագանք է ... իրականում անհնար է հասնել միատեսակության, անվտանգության, որոշակիության, պար-

⁴⁹ Օրենսդրական նախագծերի հիմնավորումները հասանելի են Ազգային ժողովի պաշտոնական կայքում (www.parlament.am):

⁵⁰ Մանրամասն տե՛ս, օրինակ, **Detlev F. Vagt**, Treaty Interpretation and the New American Ways of Law Reading, *European Journal of International Law*, (1993), 485-87:

⁵¹ Գանգատ թիվ 23459/03, 7-ը հուլիսի, 2011 թ., վճռի հայերեն թարգմանությունը հասանելի է ԱՆ կայքում՝ http://justice.am/storage/files/legal_acts/legal_acts_6240242837_Bayatyan_V_Armenia-Final_Version.Pdf:

զեցման, կարգապահության և վերահսկելի աշխարհի զգացման»⁵², նշում է ռեալիզմի հայտնի ներկայացուցիչ Ֆրենկը: Ռեալիստական հայեցակարգի անկյունաքարը Լլեվելինի թեզն է. իրավունքը այն է, թե ինչպես են դատավորները և այլ պետական պաշտոնյաները իրականում վարվում կոնկրետ վեճերը լուծելիս⁵³:

Իրավական նորմերի մեկնաբանման ռեալիստական կանոնը հիմնված է այն իրողության վրա, որ օրենսդիրը իրավական կանոնը սահմանելիս չի փորձում սոսկ բառերով լցնել իրականությունը, այլ փորձում է արդար կարգավորումներ տալ հասարակական հարաբերություններին: Իսկ կիրառողները չպետք է բանտարկվեն բառերի զնդանում և բացահայտեն օրենսդրի կամքը չկտրվելով իրականությունից:

Այս մոտեցումը ԱՄՆ իրավագետները բացահայտում են հետևյալ օրինակում: ԱՄՆ Սահմանադրությունը Նախագահ դառնալու համար սահմանում է 35-ամյա տարիքային ցենզ: Դրա նպատակը ոչ թե խիստ տարիքային սահմանափակում սահմանելն է, այլ ԱՄՆ Նախագահի պաշտոնում միայն հասուն մարդու տեսնելը: Իսկ հասուն մարդու որակներով կարող է օժտված լինել նաև 34-ամյա մարդը: Ընդ որում, կյանքն այնքան արագ է փոխվում, որ Սահմանադրության այս դրույթը ամրագրելու պահին 35-ամյա միջին վիճակագրական մարդուն բնորոշ որակները կարող են որոշ ժամանակ անց համապատասխանել 30-ամյա մարդկանց⁵⁴:

Իհարկե, այս օրինակը խոցելի է՝ հաշվի առնելով քննարկվող նորմի հստակությունը: Սակայն դա բացահայտում է մեկնաբանման ռեալիստական կանոնի իրավական հիմքերը: Կիրառողը ոչ թե սեփական հայեցողությամբ է որոշում նորմի բովանդակությունը, այլ հիմնվում է օրենսդրի իրավական տրամաբանության վրա:

Մյուս կողմից, նորմերը միշտ չէ, որ այդքան պարզ են ձևակերպված: Ռեալիստական կանոնը հատկապես օգնության է հասնում այն ժամանակ, երբ օրենսդրի ձևակերպումը լիարժեք չէ, իսկ այն ճշտելու հնարավորություն ուղղակի չկա: Այսպես, օրինակ, ԱՄՆ նախկին դատավոր Ռիչարդ Պոզները փորձում է ռեալիստական մոտեցումը բացահայտել մի հիպոթետիկ իրավիճակով: Պատկերացնենք՝ ռազմի դաշտում շրջափակված ջոկատի հրամանատարն ունի երկու տարբերակ՝ գնալ ուղիղ և ճեղքել շրջափակումը, կամ գնալ աջ և շրջանցել այն: Կապվելով գլխավոր շտաբի հետ՝ վերջինս ստանում է հրահանգ՝ գնացե՛ք ...: Կապը խափանվում է, և այլևս հնարավոր չէ պարզել՝ ուր

⁵² Frank J. Law and the Modern Mind. Transaction Publishers, New Brunswick, N. J. 2009, p. 167.

⁵³ St u Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study. Quid Pro, LLC, 2012, էջ 11:

⁵⁴ St u Peller, The Metaphysics of American Law, 73 CALIF. L. REV. 1151, 1174 (1985), Tushnet, A Note on the Revival of Textualism in Constitutional Theory, 58 S. CAL. L. REV. 683, 686-88 (1985):

զնալ՝ ուղի՞ դ, թե՞ աջ: Եթե ջոկատի հրամանատարը չգործի այս իրավիճակում և սպասի հստակեցման, նա, վստահաբար, սխալված կլինի: Ուստի վերջինիս մնում է միայն ինքնուրույն որոշել՝ գլխավոր շտաբը ի՞նչ լուծում նման իրավիճակում կտար՝ ելնելով վերջինիս ընդհանուր ռազմավարությունից⁵⁵:

Նման կերպ էլ, ըստ ռեալիստական մեկնաբանման կանոնի, պետք է գործի կիրառողն այն դեպքերում, երբ իրավական նորմը այնպես է ձևակերպված, որ հնարավոր չէ հասկանալ օրենսդրի ուղղակի լուծումը կոնկրետ պահին կոնկրետ իրավիճակի համար: Կիրառողը այս պարագայում պետք է փորձի հասկանալ՝ ինչպե՞ս օրենսդիրը կլուծեր այս հարցը տվյալ պահին:

Մեկնաբանման ռեալիստական կանոնը հաջողությամբ օգտագործվում է ՄԻԵԴ իրավակիրառ պրակտիկայում: Նույն «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով դատարանը, ընդունելով հանդերձ, որ կոնվենցիայի տեքստը չի սահմանում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու մարդու իրավունքը, համարել է, որ այդ մոտեցումը հիմնված է եղել կոնվենցիայի ընդունման պահին Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գերիշխող մոտեցումների վրա, որոնք ներկայումս էապես փոխվել են: Այդ պետությունների գերակշռող մասը (այդ թվում՝ Հայաստանը) իրենց օրենսդրություններում ճանաչել են այդ իրավունքը: Իսկ «Կոնվենցիան «կենդանի գործիք» է, որը պետք է մեկնաբանվի արդի հանգամանքների ներքո և ներկայումս ժողովրդավարական պետություններում գերակայող գաղափարների հիման վրա»⁵⁶:

Մեկնաբանման ռեալիստական կանոնի հայկական իրականություն ներթափանցելը թեպետ դժվար է, սակայն՝ իրատեսական: Դա առաջին հերթին վերաբերում է իրավական նորմի տեքստի թերությունը լրացնելու գործառնություն: Սակայն կարծում ենք, որ հեռու չէ այն ժամանակը, երբ դատարանները կսկսեն նաև զարգացնել իրավունքը՝ փոփոխելով օրենսդրական հնացած մոտեցումները: Դա ապագայի հարց է, քանի որ Հայաստանի Հանրապետությունը դեռ քառորդ դարից մի փոքր է մեծ, իսկ օրենքներն ավելի երիտասարդ են և չեն հասցրել այնպես հնանալ, որ կիրառողներն արձագանքեն դրան: Մյուս կողմից՝ ժամանակակից աշխարհը փոփոխվում է կայծակնային արագությամբ, ինչին, բնականաբար, չի հասցնում արձագանքել օրենսդիրը: Այստեղ է կիրառողին օգնության հասնելու ռեալիստական մեկնաբանումը՝ թույլ տալով ճիշտ արձագանքել արդի իրականությանը:

Հատկանշական են այս հարցում նաև մեր օրենսդրական կարգավորումները: Թեև մեկնաբանման ռեալիստական կանոնը ուղղակի

⁵⁵ Տե՛ս **Richard A. Posner**, Legal Formalism, Legal Realism, and the Interpretation of Statutes and the Constitution, 37 Cas. W. Res. L. Rev. 179 (1986), 189:

⁵⁶ Supra note 54, պարբ. 101-109:

սահմանված չէ որևէ օրենքով, այն նաև արգելված չէ: Ավելին, Դատական օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը Վճռաբեկ դատարանի՝ օրենքների միատեսակ կիրառության ապահովման գործառնությունը կապում է *inter alia* իրավունքի զարգացման խնդրի հետ: Դա նշանակում է, որ օրենսդիրն ինքն էլ է գիտակցում, որ օրենքների ոչ միատեսակ կիրառումը կարող է հետևանք լինել թերի կամ հնացած ձևակերպումների, որոնք շտկելը Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելությունն է:

Միաժամանակ պետք է նկատել, որ իրավունքի զարգացումը չի կարող միայն Վճռաբեկ դատարանի մենաշնորհը լինել: Իհարկե, Վճռաբեկ դատարանը՝ որպես գերագույն դատարան, ապահովում է օրենքների միատեսակ կիրառությունը, քանի որ մյուս աստիճանների ակտերը վերջնական չեն (բացառությամբ օրենքով սահմանված որոշ սահմանափակ դեպքերի): Սակայն առաջին կամ վերաքննիչ աստիճանների կողմից իրավունքի զարգացումը ևս հնարավոր է, քանի դեռ Վճռաբեկ դատարանը այլ մոտեցում չի արտահայտել: Ի վերջո, եթե առաջին կամ վերաքննիչ աստիճանների դատարանները մեկնաբանման ռեալիստական կանոնով զարգացնեն իրավունքը, և գործը հասնի Վճռաբեկ դատարան, վերջինս այդ մոտեցմանը համաձայնելու դեպքում, բնականաբար, պետք է վերահաստատի այն, այլ ոչ թե բեկանի դատական ակտը միայն այն պատճառով, որ մյուս աստիճանները չէին կարող իրավունք զարգացնել:

IV. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ է տալիս պնդել, որ իրավական նորմերը սոսկ տեքստեր չեն, դրանք կարգավորում են իրական հարաբերություններ և ազդում են իրական կյանքի վրա: Ուստի դրանց մեկնաբանումը ևս չի կարող լինել զուտ տեքստուալ-տեխնիկական, այլ պետք է համապատասխանի այն մոտեցմանը, որը օրենսդիրը որդեգրել է իրական կյանքը կարգավորելիս:

Իրավական նորմերի մեկնաբանության հնարքները բազմազան են՝ սկսած գրված նորմերից մինչև չգրված կանոնները: Հայրենական իրավակիրառ պրակտիկան գերազանցապես հիմնվում է հենց մեկնաբանման գրված նորմերի վրա, սակայն այս կանոնների օգուտը այնքան էլ մեծ չէ: Ավելին, օրենսդրի խնդիրը չէ իր ընդունած նորմերի մեկնաբանումը: Վերջինիս գործառնությունը հասարակական հարաբերությունները կարգավորելն է, որի եղանակի մասին նա հայտնում է տեքստերի միջոցով: Իսկ պրակտիկայում դրանց ճիշտ մեկնաբանման ու կիրառման խնդիրը դատական և այլ լիազոր մարմինների իրավասության տիրույթում է: Հետևաբար սխալված կլինի օրենսդիրը, եթե փորձի սահմանափակել իր իսկ ընդունած նորմերը իրավակիրառողի կողմից համարժեք ընկալելու համար գործածվող մեխանիզմները: Ի-

հարկե, օրենսդիրը իրավական նորմերով կարող է հուշել կիրառողներին մեկնաբանման օգտակար գործիքների մասին, սակայն դրանք չպետք է լինեն սպառիչ և պարտադիր: Կիրառողը պետք է ունենա անհրաժեշտ ազատություն մեկնաբանման հնարքների ընտրության հարցում, որպեսզի ստիպված չլինի արդարությունը ստորադասել անշունչ տեքստերին:

Վերջապես, իրավական նորմերի մեկնաբանման գործընթացը մեխանիկական չէ, այն իրավական բնույթ ունի և չի կարող սահմանափակվել զուտ լեզվական գործիքներով: Ավելին, լեզվական կանոնները հաճախ ոչ միայն չեն բացահայտում օրենսդրի իրական կամքը, այլ ընդհակառակը՝ խճճում են կիրառողին բառարաններում օգտագործվող բազմիմաստության լաբիրինթոսում: Ի վերջո, ո՛չ օրենք ընդունողները, ո՛չ էլ օրենսդրական տեքստեր կազմողները լեզվաբաններ չեն և բառարանային մտածողությամբ չեն առաջնորդվում իրավական նորմեր շարադրելիս: Իրականում օրենսդրական տեքստերում օգտագործվող բառապաշարը իրավաբանական եզրույթների և առօրյա հասկացությունների խառնուրդ է, որոնց իսկական իմաստը թաքնված է օրենսդրի իրավամտածողության խորքերում:

Արդյունքում, որքան էլ որ բազմազան լինեն մեկնաբանման գրված և չգրված կանոնները, որն էլ որ ընտրի կիրառողը կոնկրետ հարցերի կարգավորման ժամանակ, պարզ է մի բան՝ գործ ունենք իրավունքի հետ, և կիրառողի այս կամ այն ընտրության հիմքում դրված պետք է լինեն ոչ թե տեքստային-լեզվական, այլ իրավական պատկերացումները: Իրավունքը մարդկանց կյանքն է կարգավորում, իսկ ճակատագրական բառախաղերը պետք է բացառվեն իրական կյանքում: Ուստի իրավական նորմերի մեկնաբանման ռինգում տեքստի և իրավունքի բախման դեպքում, մեր համոզմամբ, հաղթանակի նժարը անվերապահորեն իրավունքի կողմն է:

Բանալի բառեր – *մեկնաբանման լեզվական կանոններ, տեքստուալիզմ, ստանդարտ պատկեր, մեկնաբանման իրավական մեխանիզմներ, իրավական կառուցում, օրենսդրի կամք*

КАРЕН ЗАРИКЯН – Толкование правовых норм. Текст vs право. – В статье сравниваются механизмы толкования правовых норм – от писанных норм до неписанных правил. Выдвигаются точка зрения о недостатках, присущих текстуальному толкованию, и тезис о том, что правовые нормы, регулирующие реально складывающиеся общественные отношения, не должны толковаться чисто лингвистически. Ведь сколь ни многообразны возможные толкования, речь идёт о праве, и поэтому выбор правоприменителя следует обусловить не текстually-лингвистическими, а правовыми нормами. Необходимо исключить судьбоносные ошибки, зачастую возникающие по причине предпочтения сугубо текстуального толкования правовому. Именно правовое толкование позволяет выявить изначальную волю законодателя.

Ключевые слова: лингвистические правила толкования, текстуализм, стандартная картина, правовые механизмы толкования, правовое построение, воля законодателя

KAREN ZARIKYAN – *Interpretation of Legal Norms. Text vs Law.* – In the article different mechanisms of legal norms' interpretation are being compared. As a result, many disadvantages of the textualism are being discovered and the author offers a thesis that legal norms, governing real human life, should not be interpreted mostly by using linguistic rules. Ultimately, no matter how varied the possible written and unwritten rules of interpretation, however, it is a question of law, and therefore the choice of law enforcement should be determined not by textual-linguistic, but legal representations of the latter. It is necessary to exclude the fatal mistakes that often arise due to the superiority of the scales in favor of a textual rather than legal interpretation. It is stated that it is the legal interpretation that reveals the initial will of the legislator.

Key words: *linguistic rules of interpretation, textualism, standart picture, legal mechanisms of interpretation, legal construction, will of legislator*

Ներկայացվել է՝ 11.12. 2019,
Գրախոսվել է՝ 24. 12. 2019,
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020